

()սմանցոյ թագաւորը 20 .
 Սպանիայի թագուհին (Սզապէլ-
 ւա) 13 :

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

Երբեք :

«Եւ մանաւանդ սոցո՛ւնց նման գտցէ որ հրաշալի
 » զողբերգական գաս ... Եւ ի սոցանէ գարձեալ որ
 » զմեծ յաղթանակ գովութեանցն երթեալ տանի՝
 » Եւրիպիդէս ճանաչի ողբերգակ . զի գորովագոյն
 » իմն և գեղեցկայարմար գիւցաղնական ողբեր-
 » գութիքն ուրախացուցեալ զոգիս մոռուուացն ,
 » անջինջ յիշատակաւ ի նոսին և զխրատուցն ար-
 » ձանակեալ անմահարար եթող արժանաւոր յի-
 » շելոյ արուեստ » :

ԽՈՐԵՆ . Ի ԳԻՐՍ ՊԻՏ :

ԽՈՐԵՆ ԱՅԻՆ զարմանալով մը Սա-
 հակ բազրատունիին ուսումնասէր
 հետաքրքրութեանը վրայ՝ որով Պար-
 սից առասպելներուն վրայ տեղեկու-
 թի խնդրեր էր իրմէ , կ'ըսէ . « Օ ի՞նչ
 » քեզ առ այսօրիկ կարօտութի ա-
 » ռասպելք սուտք , կամ զի՞նչ պէտք
 » անմիտ և անհանձար բանից յարմա-
 » ընք . մի արդեօք յունական պերճ և
 » ողորկ առասպելքն իցեն հանդերձ
 » պատճառաւ , որք զձշմարտութի ի-
 » ըացն այլաբանաբար յինքեանս ու-
 » նին թաքուցեալ : Սխտաբէսալ կ'ի-
 մացուի թէ շատ աղէկ հմտացեր էր
 խորենացին յունական բանաստեղ-
 ծութեց ոճին և իմաստին , և թէ կը
 յորդորէր կամ գէթ իրաւունք կու-
 տար մեր ազգին ուսումնասէրներուն՝
 որ Յունաց ընտիր մատենագրութեք
 հետեւին : Եւ յիրաւի . վասն զի այն-
 չափ է Յունաց հին բանաստեղծնե-
 րուն ընականութիւնը , գեղեցկու-
 թիւնը , ճշգրութիւնը և ազնուու-
 թիւնը , որ ի՞նչ և իցէ ժամանակ օրի-
 նակ եղած են ու պիտի ըլլան կիրթ
 ախորժակի . ուստի փափաքելի բան
 է որ հաւատարիմ ու ընտիր թարգ-
 մանութեամբ մեր ազգն ալ թարգ-
 մանուած ունենայ ձեռքը գոնէ անոնց

գլխաւորներուն գործքերը : Հիմա
 ուրիշներէն զատ՝ Եւրիպիդէսին ալ
 անուանի ողբերգութիւններուն հայե-
 ընէն թարգմանութիւնը ունենալով ,
 չենք սպասեր անոնց ամբողջ հրատա-
 րակուելուն , ու մէկ պզտիկ ճաշակը
 օրագրիս մէջ կը գնենք՝ իբրեւ ուսու-
 մնասիրաց հաճոյական բան :

Եւրիպիդէս սաղամինացին Վրիս-
 տոսէ 480 տարի առաջ ծաղկեցաւ
 իբրեւ քաջ ողբերգակ բանաստեղծ ,
 ու Սոփոկլէն վար չմնալու ջանքովը՝
 շատ բանի կողմանէ նաեւ գերազան-
 ցեց անիկայ : Իրաւ է որ Սոփոկլէն
 չափ վսեմէ , բայց անկէ շատ աւելի
 սրտաշարժ է , և գրուածքին ոճը ա-
 ւելի սիրուն ու բնական է : Իրեն ողբ-
 երգութիւններուն մասնաւոր կա-
 տարելութիւնն աս է որ բարոյական
 գեղեցիկ իմաստներով զարդարուած
 են . անոր համար ողբերգակ իմաս-
 տասէր ըսուեցաւ : Բայց երբեմն ան
 փիլիսոփայական վճիռներուն պատ-
 ճառաւ՝ բանաստեղծութեան ուժը
 քիչ մը կը պակսի ու տաքութիւնը
 կը պաղի . ասով Սոփոկլէն վար կը
 մնայ : Եւրիպիդէս ութսուն ողբեր-
 գութիւն շարադրած է կ'ըսեն , թէ-
 պէտ ոմանք հարիւր քսանի չափ ալ
 կը համրեն . ասոնցմէ տասնըինը հա-
 տը միայն կը գտնուին հիմա , անոնց
 մէջ ալ ընտիրներն են Եւրիպիդէս , Ս-
 րէս , Եւրիպիդէս , և Իփիգե-
 նիս ըսուած երկու ողբերգութիւնները :
 Սեր հոս դրած հատուածը Հերակլէս
 հուլէֆին ըսուած ողբերգութեանն է ,
 որուն համառօտ պատմութիւնը կամ
 իմաստը աս է :

Հերակլէս իր կինն ու տղաքը (Ժե-
 բէ քաղաքը թողած՝ Եւրոս կ'եր-
 թայ , ու շատ յաղթութիւններ ընե-
 լէն ետքը սանդարամետքը կամ դը-
 ժոխքը կ'իջնայ . հոն երկար ատեն
 ուշանալովը՝ Ժեբացիք կը կարծեն
 թէ Հերակլէս մեռած է . ուստի
 խռովութիւն մը կը հանեն , իրենց
 Եւրոս իշխանը (որ Հերակլէսին ա-
 ներն էր) կը սպաննեն , ու տեղը Լիւ-

կոս անուանով մէկը կը դնեն : Երկայ
Հերակլէսին ցեղը ջնջելու վճիռ մը
կը հանէ , բայց վճռոյն կատարուելէն
առաջ՝ Հերակլէս վրայ կը հասնի ու
Լիւկոսը կը մեռցնէ . ան առեն Հե-
րայ չաստուածուհին կատաղութիւն
մը կը ձգէ Հերակլէսին վրայ , որով
Հերակլէս իր ձեռքը կինն ու տղաքը
կը սպաննէ . հօրը վրայ ալ ձեռք վե-
րուցած վայրկենին՝ Լթենաս չաս-
տուածուհին իրեն վրայ թմրութիւն
մը կը ձգէ : Կարծրնայ Հերակլէս ու
անմխիթար սգով կը սկսի լալ ողբալ
ըրածին վրայ . Լթենաս իր բարեկամը
վրայ կուգայ , ու սիրտ տալով Հերա-
կլէսին՝ կառնէ Լթենք կը տանի որ քա-
ւութի գտնէ ըրածին : Հոս դրածնիս
չորրորդ Լքարուածին մէկ մասն է .
որ պատգամաւոր մը եկած՝ կը պատմէ
թէ ինչ կերպով Հերակլէս իր ըն-
տանիւրը մեռուցեր է :

ՍԻՆՉԴԵՌՆԻ նըւէրք մատչէին յԱրամազդայ 'ի
բազին ,
Քաւէր ըզտուեն շաղեալ յարեանց հեղման Լիւ-
կոսին
Զոր 'ի տանէն հար վանեաց նահասակեալն Հե-
րակլէս ,
Անդ առ բազնին կայր որդւոց գեղապարիցն հան-
դէս :
Կայր Մեգարէ , կայր և հայրն , և խան բեմին
շուրջ յածէր ,
Եւ մեք սրբեալք օրհնութեան ձայն հանեալք 'ի
նըւէր :
Այն ինչ առեալ ըզխանձողն աջով ձեռամբ հե-
րակլէս
Բերէր մըխել 'ի սափորն՝ հանել նըւէր մաքրա-
պէս ,
Ինքն անջըռունչ կայ , և հայրն անդ գանդաչէր ծե-
րունին ,
Եւ գաղք մանկանց հիացմամբ 'ի հայրն յակճի-
ռըս կային .
Բայց Հերակլէս ոչ էր նոյն . եղծան նորա բիրք
աչաց ,
Թեք տեսութեան բլացեալք յարիւնդուշտն 'ի
հոսմանց :
Ի հերակլանձ 'ի ծընօտն յուզեալ փրփուրք կա-
թէին ,
Եւ ինք բարբառ արձակեաց 'ի ծաղը հատեալ մո-
լեգին .
« Հայր , զի՞ է ինձ յաշտ առնել մինչև հարեալ
զԵւրիսթէս » :
Ընդէր ինձ այս հուր մաքրիչ և կրկին քիրտն յայս
հանդէս .

1 Արտայ Միւսիւսոյն 'ի Բեմի հերակլէս :

Միով ձեռամբ մարթ է ինձ քաջ պրտակեղ գայս
պաշտօն ,
Երբ ըզկառափն Եւրիսթեայ հարեալ բերից աստ
'ի ձօն ,
Ի նոյն յայնժամ լուացայց ըզձեռս յարեանց ես
ողջիկ .
Հեղէք զաղբիւրսն , և ըզխանս արկէք 'ի բաց ,
պատանիք :
Ո՞ ինձ տացէ զմաղեղն , ո՞ և զիմ զէնն 1 'ի ձեռին .
Ես 'ի Միւկեն չու առնեմ , դուք հորդեցէք զիմ
ուղին :
Ի բուռն առնուլ ինձ զարդիս պէտք են նըգաց ,
փայտատաց ,
Դիմեալ հարից քանդեցից ըզկայս դադարս Կիւ-
ղոպոյց .
Զոստանն յարեալ 'ի մըճոց , և կանոնաց 'ի նօթից 2 ,
Յերկաթագամ յեռարձէն նըգախարխար արա-
րից » :
Ասաց , յարեալ . չունէր կառս , ասէր ունել նա
ըզնոյն ,
Եւ եւ իբրեւ վերելեակ նստաւ կառացն 'ի բար-
ձուն :
Գանէր , վարէր , և յիւր ձեռն իբրու գանէր 'ի մը-
արակ ,
Քահ և 'ի ծաղը յայն տեսիլ կային կրկին ըսպա-
սեակք :
Անդ հիացմամբ առ իրեարս այր բարբառէր ըն-
կերի .
« Եւ ինչ արդեօք առնէ տէրս , եթէ յիրաւ մո-
լեգնի » :
Իսկ նա 'ի վեր և 'ի վայր սողայր 'ի տան և մոլէր :
Եկեալ 'ի մէջ յայրանոցն , հասեալ յոստան զինքն
ասէր ,
Յոստան 'ի սեայ ասէր զինքն , յորժամ 'ի տուն
անդր եմուտ ,
Առեալ բազմոց 'ի գետնի իբր անդ կազմէր հաց-
կերոյթ :
Սուղ ժամանակ գեգերեալ յայրանոցին 'ի միջն ,
Յանձաւս ասէր զինքն հասեալ անտառախիան
Խթմոսի :
Անդ մերկացեալ ըզկոճկէնն ընդ ոչումք մարտն-
չէր ,
Սակայն յաղթող զինք կարգայր , իսկ ո՞ յաղ-
թեալն , ոչ ասէր :
Բայց Եւրիսթեայ սպառնալիս անհղաձայն որո-
տայր ,
Եւ զինք կարծէր 'ի Միւկեն գնացեալ առեալ
ըզգագար :
Հայրն անաբեկ զքաջորդւոյն ձեռացն առեալ
բարբառէր .
« Զինչ կիրք իցեն , ո՞վ որդեակ , զինչ նորութեանս
այս պատկեր .
Միթէ արիւն սպանելոցդ յանկարծ ըզքեզ առ-
մոլեաց » :
Նա յայլոյ խել՝ Եւրիսթէս դատեաց ըզհայրն առ
'ի կարծ .
Թեպէտ և հայրն ողորէր , ըզձեռն անխել փայ-
փայէր ,
Նա զնա մերժեաց , և զճապուկ կապարճս առեալ
պատրաստէր .

1 Լիւկոս հաւաքեալ :

2 Կանոն 'ի Եօթե վարէին հինգ 'ի լինումս :

Կազմէր զաղեղն , իւր որդւոց իբր Եւրիսթեանց մահ ածեւ :
 Պակեաւ մանկտին և յարեաւ յայս կոյս յայն կոյս խուճապէւ :
 Ոմն ընդ ձորձով թաքեաւ մօրն , ոմն անց ընդ սեանն ըստուերաւ ,
 Ոմն ընդ բագնաւ զերթ թռչունն 'ի գող հարեալ զօղեցաւ :
 Ձայն երարձ մայրն . «Ո՛ր ծնող, զինչ, մահ ածես զաւակաց» :
 Ձայն ամբառնայր ծերունին , ձայն և ամբոխն ընտանեաց :
 Նա շուրջ ըզսեամբն հետամուտ կաց առ ոտիւք զաւակին ,
 Ի լեարդն եհար սայրասուր ճախարակեայն ըզփրքին :
 Անկաւ մանուկն 'ի յորսայս և ըզվերջին շունչ փրչեաց ,
 Եւ ըզկոթողսն կրճեայս արեամբ իւրով ուռգեաց :
 Իսկ նա խայտաց բարձրաձայն և զայս պանծայր առ խնդին :
 «Վաշ վաշ, ասէր, ահ' անկաւ մին 'ի ձագուց Եւրիսթին :
 Լուծցէ ըզվրժ առ ոտիւքս զթնամուծեանն հայրենի» :
 Ասաց, լարեաց զլայնալիճն յերկրորդ զաւակ շեշտակի :
 Սա ապաւէն փրկութեան ունէր զեղջիւրս ըզբագնին ,
 Սակայն կանխեաց հէգ զաւակն առ ոտս անկաւ ծնողին :
 Առ պարանոցն , առ ծննօսն ըզձեռս ձրգեալ պաղատէր ,
 «Ո՛հ հայր , ասէր, հայր սիրուն , մի գու 'ի սպանդ զիս մասնէր :
 Քո եմ զաւակ , քո եմ ես , գու ոչ հարուս զԵւրիսթեայ» :
 Նա այլ յայլմէ չըջեաց զաչս ահեղ հանգոյն Գորգոնայ :
 Ի մէջ մահու կայր մանուկն 'ի ձիգ կշռեալն 'ի նետէ :
 Նա զերթ գարբին որ վայրագ հրաշէկ զերկաթն բախէ ,
 Խարտիչագեղ զաւակին այնպէս փրքին մահաբեր Բախեալ 'ի գլուխն 'ի խարտեալ ըզնետաբունն հարկանէր :
 Փշքեաց զոսկերան , և հարեալ այսպէս զերկրորդ զիւր որդին ,
 Երկուց մահունցն 'ի վերայ դիմեաց 'ի սպանդ երրորդին :
 Անդ 'ի յարկին խուճապեալ մայրն հիքացեալ առ ըզնա ,
 Կորզեաց զտղայն յորհասէն , փակեաց ըզգուրսն 'ի վերայ :
 Նա մոլեգին իբրու այն առ գուրս հասեալ Կիկղոպեանց ,
 Թափ 'ի դրանդիս հար խըզեաց նըգախարխար 'ի հիմանց :
 Ըզբարաւորան և ըզսեամս արկեալ գուայր մեծասաստ ,

Եւ ըզտղայն և ըզմայրն 'ի մի փրքին արկ տապաստ :
 Այն ինչ ճեպէր ծերունւոյն հօր իւր շաղիւ և յարեան ,
 Անդ յանկարծուստ գայր պատկեր ամենեցուն յերևան :
 Էր նա Պալլաս , որ ճօճէր ըզսայրասուրն ըզնիզակ ,
 Եւ եգ 'ի լանջս հերակլեայ վէմ ահագին գըժընգակ :
 Արգեւ կարճեաց 'ի սպանդից , և ըզմոլեալն հանգոյց ,
 Եւ խոր 'ի քունն թանձրութեան արկեալ ըզնա նիրհեցոյց :
 Անկաւ յայնժամ 'ի գետին խոնջ և վաստակ 'ի գոռման ,
 Անկաւ և զուարն բախեաց թաւալագլոր մօտ առ սեան ,
 Որ 'ի քանդեղն յարկին գլեցաւ 'ի կողմն յատակաց :
 Եւ ինքն 2 'ի մի ընդ ծերոյն հանգոյցս առնէր ըզսարեաց :
 Դարձ փախստեայքս արարեալ կապեմք ըզնա պինդ ընդ սեան ,
 Զի մի սթափեալ 'ի քնոյն վայրագացի միւսանգամ :
 Արդ նա յարեանց իւրայնոց շաղեալ ննջէ դառն ըզքուն ,
 Ես ոչ գիտեմ, ո՞ր կայցէ մարդ քան ըզնա հիքագոյն :

ՊԱՐՆ

Ինձ որ լալումն և որ կոծ , կամ երկրածնաց որն յողբոց :
 Արգեօք ըզպարն աստ կարգամ զՀահապետին գըժոխոց :
 Տեսէք ահա զերկբացիկս բարձրայարկին տապալեալ ,
 Տեսէք զմանկունս աղածրիս հօրն յանդիման տալածեալ :
 Հայրն խոնջեալ 'ի յարեանց կայ խոր 'ի քունն հիքապէս ,
 Բազմահանգոյց 'ի խեղդից սարեօք պրկեալ պընգապէս :
 Իբր հաստարանք քաջամուրք շուրջ ըզմարմնոյն հերակլեայ ,
 Ամրապահեալ 'ի յարկին պատեն ըզսիւնս մարմարեայ :
 Իսկ սա իբրն ըզթռչուն ցաւեալ յիւր ձագս անփետուր
 Աստ գայ 'ի սիրտ գառնացեալ ծերս այս գողդոջ անձնապուր :

1 Ձայն վէ՛ հեւելն + Σωφρονιστήριον խոնջին , Իբր գլխատացուցին :

2 Նա ինքն է Պալլաս կամ Աթենաս :